ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 31 >> 05 2013թ. N: 137-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 20 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ԳՅՈՒՄՐՈՒ N 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N 774-Ն որոշմամբ հաստատված «Ավագ և հիմնական դպրոցների ցանկի» 19-րդ կետը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 20 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Գյումրու N 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի մի շարք պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 66 որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետը:

4. Հանձնարարել «Գյումրու N 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գրիգոր Հարությունյանին՝ տասնօրյա ժամկետում ապահովել կանոնադրության պետական գրանցման գործընթացը:

5. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ս. Մինասյանին :

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ՝ճիշտ է՝